


ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԽՄԱՆ-ԱՀԱԴ :

ԽՈՌԱՒԱՉԱՓԲ : Կը գործածուի օ-
վին մէջի եղած թացութիւնը կամ
շրութիւնը իմանալու համար : Ա ասն
զի օդը ո՞րչափ ալքոր ըլլայ , միշտ մէ-
ջը խոնաւութիւն կը գտնուի : Աս
բանիս փորձը ընելու համար , թէ որ
պարզ ու չոր որ մը ամանի մը մէջ
ցրտացուցիչ բան մը դնելու ըլլահիք ,
կը տեսնենք որ ամանին դրսի մակե-
րեւութիւն վրայ խոնաւութիւն կը նստի ,
որ օդին մէջ գտնուած գոլորշիքն է :
Ան նիւթերն որ խոնաւութիւն կը
ծծեն՝ կրնան խոնաւաչափ ըլլալ . բայց
ամենէն աղէկն ու գործածականը Առ-
սիւրի՝ խոնաւաչափն է , որ մազէ շի-
նած է : Ասոր մէկ ծայրը հաստատուն



է , վարի ծայրէն ալ ծանրոց մը ունի .
օդը որչափ թաց ըլլայ՝ այնչափ առ
մազը կ'երկըննայ , իսկ չոր եղած ա-
տենը կը կարձընաս , ու ո՞րչափ կար-
ձընալը քովի ցուցակէն կ'իմացուի .
բայց գիտնալու է որ բնական մազը
եղոտ ըլլալով , օդին խոնաւութիւնը
դիւրաւ չի կրնար ծծել . անոր համար
առաջուց պէտք է աղէկ մը եփել մա-
զը ջրով , ու մէջն ալ քիչ մը սասկն
ձգելու է , որով աղէկ մը կը մաքրուի :

1 Hygromètre.

2 Saussure.

Խոկ քովի կլոր շրջանակը հարիւր հա-
ւասար աստիճան բաժնուած է . զրոն
կը ցըցնէ մազին սաստիկ չորութիւնը ,
որ ըսել է թէ անկէ աւելի չկրնար
կարձընալ , իսկ հարիւրը կը ցըցնէ մա-
զին սաստիկ թացութիւնը , որ ըսել
է թէ անկէ աւելի ալչկընար երկըն-
նալ : Արնայ մէկը աս շրջանակը հա-
րիւրէն աւելի կամպակաս աստիճան
բաժնել . բայց միշտ չոր եղերքը զրոյ
սեպէլու է , ու անոր յարմար աստի-
ճան բաժնելու է :

Է . (Ը) օդը ինչպէս հարիւր է մէր հե-
նացը համար :

ՄԵՐ ԿԵԱՆՔՔ պահողը օդն է . մար-
դուս կուրծքը մէկ վայրկենի մէջ 30
անգամի չափ կ'ելլէ ու կ'իջնայ՝ օդը
ներս ընդունելու ու դուրս տալու հա-
մար , աս գործողութեան շնչառու-
թիւն կ'ըստէնք : Աւստի որ և իցէ կեն-
դամի թէ որ մէկ քանի վայրկեան օդ
կամ շունչ չկարենայ առնել , սաստիկ
նեղութիւն կը քաշէ . իսկ եթէ ան
միջոցը քիչ մը երկարի , բոլորովին
կ'անշընչանայ , այսինքն կը մեռնի .
և սովորաբար շունչ չառնուլը մա-
հուան նշան է : Հիմա տեսնենք թէ
ասքանիս փորձը ինչպէս կրնանք ընել :

(Օ դահան գործւոյն ընդունարա-
նին տակը կենդանի մը կամ թռչուն
մը գիր , ու քանի մը անգամ միոցը
շարժէ . երբոր ամանին մէջի օդը քիչ
մը անօսրանայ , կենդանին կը սկսի
անհանգիստ ըլլալ , կամաց կամաց
կ'ուռի , ետքը կ'անշնչանայ կ'իջնայ ,
ու թէ որ քիչ մը ատեն այնպէս թռ-
շուս՝ կը մեռնի : Աենդանւոյն ուռե-
լուն պատճառը՝ մարմնոյն մէջի օդին
անդայտանալն է , որ կ'ուզէ դրսի ա-
նօսրացած օդուն հետ հաւասարա-
կըն ըլլալ , և մարմնէն գուրս ելլու
ժամանակ՝ ճամբուն մէջ եղած ար-
գելքներն ալ գուրս կը վանէ . ուստի
աս փորձին ատեն կենդանւոյն փորն

ալ կը լուծուի : Փորձով կը տեսնենք որ կատուի ու շան պէս հանձարեղ կենդանիք՝ իմանալով որ իրենց աս նեղութեան պատճառը օդահանին ծակէն օդոյն դուրս փախչին է, իրենց թաթիկներով կը ջանան նոյն ծակը ամուր մը գոցել . բայց աս բանս կը նայ արգելուիլ . թէ որ ծակին բերանը բարձրկեկ խողովակ մը դնես ու մէջի օդը այնպէսով պարպէս : Ի՞ս բանիս պատճառը օդին անգայտանալն ըլլալը անկէց ալ կ'իմացուի որ երբոր նորէն թողուս որ օդը ներս մտնէ, կենդանին թէ որ բոլորովին մեռած չէ՝ նորէն կը կենդանանայ : Ի՞ս պատճառիս համար է որ օդապարիկով բարձր տեղ ելլողները, կամ բարձր լեռներու վրայ մարդս դժուարաւ շունչ կ'առնէ . վասն զի հն տեղի օդը շատ աւելի նօսր ըլլալուն՝ մեզի չյարմարիր :

Դիրեթէ ամենայն տեսակ կենդանաց վրայ աս փորձս եղած է . որով և կը տեսնուի թէ ամենէն աւելի չորքոտանիք ու թուշունները նեղութի կը քաշեն անգայտացած օդի մէջ ապրելու, իսկ սողուններն աւելի երկայն կը դիմանան : Ձկները թէպէտ ջրի մէջ կ'ապրին, բայց յայտնի բան է որ ջրին մէջ ու ջրէն դուրս շնչառութի ալ ունին . անոր համար է որ ամանով ջրի մէջ դրուած կարմրախայտ ձկները շատ անգամ ջրին երեսը կ'ելլէն ու իրենց բերնէն մանր օդոյ պըղպըջակներ կը հանեն : () դահան դործոյն ընդունարանին տակը ամանով ջուր դիր, որուն մէջ ձուեկ մ'ըլլայ . երբոր մխոցը շարժելով՝ ջրին մէջի օդը հանես, (որ ելլէլը կը նայ իմանալ ջրին մէջէն ելած պղպջակներէն,) ձուեկը կը սկսի տանջուիլ, ու յետոյ մեռածի պէս ջրին երեսը կ'ելլէ . երբոր քիչ մը օդ թողուս մէջը, մէկէն ամսնին տակը կ'իջնայ ու անշարժ կը կենայ, ինչուան չժողովուս որ ամանին մէջ օդ մտնէ . աս բանս ձկան օդովլցուած փամփուշտէն է . որ քանի որ անգայտանայ՝ ձուկը թէթէնա-

լով ջրին երեսը կ'ելլէ, և որչափ խտանայ՝ վար կ'իջնայ :

Ո՞իջատներու վրայ ալ փորձ ընելով կը տեսնենք որ թէպէտ օդը պարպէլէն ետեւ երկայն ատեն կ'ապրին, բայց օդը քիչ մը անօսրանալուն պէս՝ չեն կը նայ թուջիլ ու վար կ'իջնան :

Խնչպէս որ առանց օդոյ մարդ ու կենդանիք չեն կը նայ ապրիլ, այսպէս ալ ապականած օդոյ մէջ շատ կը վնասուին ու գրեթէ վերջը մահուան կ'երթայ . օդն ալշատ կերպերով կը ընայ ապականիլ, մանաւանդ չնչմամբ, և գէշ հոտեր արտաշնչող մարմիններով : Ի՞սոր փորձը ընել կ'ուզես նէ՝ ապակէ անօթի մը տակ ձնազուկ մը դիր ու չորս դին այնպէս գոցէ որ ներսի օդը չփոխուի . կը տեսնես որ առջի բերան թուչունը ուրախ զուարթ ասդիս անգին ցատքրտելով կ'երգէ, բայց քիչ մը ատենէն ձայնը կը սկսի մարիլ, դժուարաւ շունչ կ'առնէ ու նեղութիւն մը կ'իմանայ . ու թէ որ երկայն ատեն թողուս՝ կ'իջնայ կը մեռնի : Ի՞սոր պատճառը աս է . թէպէտ և ըսինք թէ մարդս առանց օդոյ ըրկընար ապրիլ, բայց աս ալ իմանալու է որ ան օդն ալ պէտք է ստէպ փոփոխի . վասն զի շնչառութեամբ անոր մէջի կենսական մասը կը ծծենք՝ որ գլխաւորապէս թթուածինն է, ու միայն անկենդան մասը կը մնայ, որ է ածխային մասը . և որովհետեւ մէկ վայրկենի մէջ 4 լիտր օդ կը ծծէ մարդս, ասկէ իմացիր թէ որչափ օդ հարկաւոր է մարդուս կենացը . անոր համար պղտիկ տեղւոյ մէջ բնակողները պէտք է ջանան իրենց օդը ստէպ նորոգել, ապա թէ ոչ՝ նոյն ապականած օդին մէջ նստիլը շատ վնասակար է . և մանաւանդ ժողովարաններու մէջ շատ հարկաւոր է աս զգուշութիւնս . անոր համար կը նայ բնակարանին մէկ կողմէն օդափոխ գործիք մը դրուիլ, այսինքն ծակ մը բացուիլ ու ան ծակին դիմացը թիթեղէ թեւերով անիւ մը դրուիլ, որ ներսի օդը տաքցած ատենը դուրս ելլէլու

ժամանակ զանիկայ կը դարձընէ , ու գրսի մաքուր օդը ներս կը մննէ . աւելի աղէկ կ'ըլլայ՝ թէ որ աս դործիքը երկու հատ ըլլայ , մէկը բնակարանին յատակին մօտ՝ մէկալը աւելի բարձրերը , որ աւելի աղէկ կը բանի :

Լպականած օդէն առաջ եկած սոսկալի դիպուածներու մէկ օրինակն ալ աս ըլլայ : || Երջի ատեններս 145 հոգի իրիկուան դէմ բանտ մը դրուեցան որ 18 ստք լայն ու 18 ստք երկայն տեղ մըն էր . և միայն երկաթապատ պատուհանէ մը օդ կ'առնէին . կէս գիշերուն օդին ապականութենէն աս խեղձերը սոսկալի ցաւեր ու խոստուկներ զգալով սաստիկ կանչուրուելէն ետև , բոլորովին լուեցին . առաւօտը ժամը վեցին բանտին դուռը բանախուն պէս՝ քսանուիրեք հոգիէն զատ մէկալնոնք ամէնքը մեռած դտան . բայց մնացողներուն շատն ալ փտտած ջերմէ բռնուեր էին :

|| Ճացեալ ջրերը , փտտած հոտած բոյսերն ու կենդանիներն ալ օդը շատ կ'ապականեն . անոր համար ան երկիրներն որ անշարժ լճեր շատ կանհօն տեղուանքի օդն ալ առողջ չկըրնար ըլլալ :

Ծատ վոտանգաւոր բան է նաև գիշեր ատեն պառկելու սենեկին մէջ ըոյս պահելը , վասն զի անոնք ալ օդին կենդանական մասը ծծելով՝ ածխային կազը կ'արտաշնչեն , որ մարդուս շատ վնասակար է :

Հ . Օ . ԳՈՒՐԳ :

ԽԵԼԱՑԻ ԽՈՍՔԵՐ

Քանի մը հարիսուր հարյուսուն ու պարախուներ :

Ի՞նչ է պարաւագէտքնութիւնը (+ բնիւան :)
— Խելացի մարդու յատուկ սեպուած դատաստան , չարասրափի զուարձութիւն , նախանձուի պարուակ , անխելքի բարակութիւն , հանձարելին պատուհաս :

Ի՞նչ է չարախոսը .

— Մարդ մը որ խօպին ամէնքը մտիկ կ'ընեն , ամէնքը կը հաւատան , ու զինքն ամէնքը կ'ատեն :

Ի՞նչ է յուսահատութիւնը .

— Վատ մարդուն մէկ հատիկ քաջութիւն է :

Ի՞նչ է անշահասիրութիւնը .

— Առաքինութիւն մը որ խիստ քիչ կը դանուի . այնպէս որ եթէ յանկարծ մէկուն վայ երևայ՝ առջի բերանը կամ կեղծաւորութիւն կը կարծուի կամ վատութիւն :

Ի՞նչ է խնայութիւնը .

— Ըռայլութեան ու ադահութեան մէջտեղը առաքինութիւն մըն է , որ սովորաբար երկրորդին աւելի կը մտենայ :

Ի՞նչ է աներեսութիւնը .

— Տեսակ մը յանդգնութիւն՝ որ երբեմն գործունէութիւն ու խելացութիւն կը կարծուի :

Ի՞նչ է նախանձը .

— Վտանգաւոր ջերմ մը՝ որուն պատճառը ու բիշն աղէկութիւնն է :

Ի՞նչ է ծանծաղամառութիւնը .

— Նեղ բերնով ապակի , որ որչափ քիչ բան կայ մէջ՝ այնչափ աւելի ձայն կը հանէ պարպելու ատենդ :

Ի՞նչ է ուսումը .

— Ամէն ատենի զուարձութիւն , ամէն աեղի օդնութիւն , ամէն աեսակ չարեաց դեղ :

— օօօօօ —

Ա . Բ . Ա . Կ .

ՄԵՀԱՆԻ ԴԱՊԱԿԱՆԸ :

ՄԵՐՁԻՆ մը կար բարակիկ .

Մէջքը թէլիկ՝ ոտքը կարձիկ .

Զիյաեմ խելքին ի՞նչ փըչեց .

Խիստ բարձրէն քալել ուզէց .

Վաղեց վաղեց հեալէն .

Եշաւ ի՞նչուան մինարէն .

Վերէն վար որ նայեցաւ .

Ծա անոնք ի՞նչ են ըստաւ .

Հոգի , այն ձին չէ մի սա

Որ երեկ դաշտը աեսայ .

Չըսես , ես կոյր եմ եղեր

Որ մէկ պահ առաջ խաբուեր

Ու ատանկ խեղձ ձըձիներն

Մէյմէկ հըսկայ եմ կարծեր :

Աս մըջինին չընմանիր

Ան աեսակ մատենագիր ,

Որ երէկ մէկ այսօր երկուք՝

Չորս առղ բան գրէ պազուկ պազուկ

Ու եաքը մեծ մեծ ջարդելով .

Ուրիշներու վայ իրնտալով ,

Խորիշնացին , Ռսկեբերան

Իրեն ացքին բան չերեան :

— օօօօօ —